

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ /8-րդ դասարան - Խնդիրներ 3/

1. Գտե՛ք *86* տեսքի բոլոր քառանիշ թվերի քանակը, որոնք բաժանվում են 12-ի:
2. Գտե՛ք $x^2 + y^2 + 25 = 10y$ հավասարմանը բավարարող բոլոր (x, y) թվագույգերը:
3. Երկու քառանիշ թվերի գումարը 7589 է: Եթե առաջին թվի ձախից կցագրեն 3, իսկ երկրորդ թվի աջից կցագրեն 2, ապա կստացվեն երկու հավասար թվեր: Գտե՛ք սկզբնական թվերը:
4. Քառակուսին տրոհել չորս մասի այնպես, որ ստացված մասերը վերադասավորելով հնարավոր լինի կազմել երկու հավասար քառակուսի:
5. ABCD ուղղանկյան A գագաթով ինչպե՞ս տանել երեք ուղիղ, որ ուղղանկյունը բաժանվի չորս հավասար մակերես ունեցող պատկերների:
6. 80 մետաղադրամից մեկը կեղծ է՝ թեթև է իսկականից: Չորս կշռումով գտե՛ք կեղծ մետաղադրամը:
7. Արմենը, Դավիթը, Միքայելը և Նարեկը հաճախում են տարբեր մարզական խմբակներ՝ բասկետբոլ, թենիս, ֆուտբոլ և վոլեյբոլ: Վոլեյբոլիստն Արմենի և Միքայելի հետ սովորում է նույն դասարանում: Արմենը և Դավիթը մարզումների են գնում միասին՝ ոտքով, իսկ թենիսիստը՝ ավտոբուսով: Ֆուտբոլիստը ծանոթ չէ ո՛չ բասկետբոլիստին և ո՛չ էլ՝ վոլեյբոլիստին: Տղաներից ո՞վ ո՛ր խմբում է պարապում:
8. Գերազանցիկ ուսանողի կրթաթոշակը 100%-ով է բարձր սովորական ուսանողի կրթաթոշակից, իսկ հարվածայինինը՝ 50%-ով: Քանի՞ տոկոսով է հարվածային ուսանողի կրթաթոշակը գերազանցիկինից քիչ:
9. Աշակերտը 3 օրում կարդաց գիրքը: Առաջին օրը կարդաց 0,2 մասը և 16 էջ, երկրորդ օրը՝ մնացածի 0,3 մասը և 20 էջ, երրորդ օրը՝ մնացածի 0,75 մասը և վերջին 30 էջը: Քանի՞ էջ ունի քիրքը:
10. Ուղղանկյուն եռանկյան մի էջը 12 սմ է, իսկ ներքնաձիգին տարած միջնագիծը՝ 10 սմ: Գտե՛ք եռանկյան ներքնաձիգին տարած բարձրությունը: